ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 06 >> դեկտեմբերի 2013 թվականի N 135 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՆՉԵՎ 20,0 (ՔՍԱՆ) ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48.1 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի «ա» ենթակետի դրույթները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տաղավարների, կրպակների, առևտրի ու սպասարկման այլ օբյեկտների և ավտոտնակների տեղադրման նպատակով առանց մրցույթի մինչև 20,0 (քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանել վարձավճարներ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տաղավարների, կրպակների, առևտրի ու սպասարկման այլ օբյեկտների և ավտոտնակների տեղադրման նպատակով առանց մրցույթի մինչև 20,0 (քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման վարձավճարներ սահմանելու մասին>> N 189-Ա որոշումը:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան

Լ.Բարսեղյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 06
ք.Գյումրի